

ՄՇԱԿՈՒՅՑ


ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ ՊԱՏԿԵՐՈՂ ԵՐԿՈՒ ԿՏԱՎՆԵՐԸ



Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկին պատկերող երկու շատ կարևոր կտավի մասին ենք պատմելու ընթերցողին. առաջին կտավը պատկանում է Վարդգես Սուրենյանցի վրձինի և ստեղծվել է 1906 թվականին:

Կտավն ունի ստեղծման պատմություն. 1903 թ. հունիսի 12-ին Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը ցարից հրովարտակ է ստանում հայ եկեղեցու գույքը բռնագրավելու մասին: Թեև նա մակը փակ ընկած է նրա ոտքերի առաջ, բայց կաթողիկոսը շատ լավ գիտի նրա բովանդակությունը: Նամակաբերը Երեվանի նահանգապետ իշխան Նակաշիձեն էր, իսկ այդ օրերի գլխավոր նախաձեռնողը Կովկասի փոխարքա Գուլիցինն էր:

Ճիշտ է՝ 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ 2-րդը ստորագրեց Հայ առաքելական եկեղեցու գույքը վերադարձնելու մասին հրամանագիր և թույլատրեց վերաբացել հայկական ազգային դպրոցները Ռուսական կայսրության տարածքում, բայց դրան բազմաթիվ դեպքեր նախորդեցին, որոնք վճռորոշ էին հայության համար. Խրիմյան Հայրիկը նգովում է ռուսական միապետությանը. «Թող կործանվի այս աստվածընդդեմ ու բանտաձվար կայսրությունը», ժողովրդական ցատուձր այնքան մեծ էր, որ 1905 թվականի մայիսին Բաքվի կենտրոնական հրապարակում 21-ամյա Դրաստամատ Կանայանը ռուս է նետում իշխան Նակաշիձեի կառքի վրա, հենց վերջինս էր Բաքվի հայկական ջարդերի հրահողն ու կազմակերպիչը: Թեև հայ եկեղեցուն պատկանող գույքը վերադարձնելու մա-



սին հրամանագիրը ստորագրվեց, բայց Սանկտ Պետերբուրգ ու Մոսկվա տեղա-

փոխված անգին գանձերով բեռնված տասնյակ արկղեր այդպես էլ Մայր Աթոռին չվերադարձվեցին, պարզապես անհետացան:

Սուրենյանցը պատկերել է Խրիմյան Հայրիկին իր ծերունագարդ կեցվածքի մեջ, նա նամակը անգամ չի բացել, այն իր ոտքերի տակ է՝ արհամարհված, կաթողիկոսը բռունցք է արել, որով կոչ է անում հայ ժողովրդին միավորվել՝ ընդդեմ բռնատիրության:

Երկրորդ կտավը պատկանում է Այվազովսկուն:

1895 թվականին Այվազովսկու մոտ հյուրընկալվում է Խրիմյան կաթողիկոսը, երկար ժամանակ նրանց միջև նամակագրական կապ է եղել: Հանդիսավոր ճաշին Կաթողիկոսը նկարչին խոստանում է, որ նրանց միջև նամակագրական կապ է եղել: Հանդիսավոր ճաշին Կաթողիկոսը նկարչին խոստանում է. «Ես Խրիմյան Հայրիկն եմ, մի ձեռքիս խաչ է, մյուսին՝ Սասվաճաշունց: Կաղոթեմ քո և իմ հայ ժողովրդի համար»:

Շենց նույն տարում էլ՝ 1895 թվականին, Այվազովսկին ստեղծում է «Խրիմյան Կաթողիկոսը էջմիածնի շրջակայքում» կտավը:

Այվազովսկին կաթողիկոսին պատկերել է հանգստության, խաղաղության մեջ՝ Արարատ լեռան ֆոնին:



«ԱՂՈՐԹԵՆՔ՝ ԼՈՒՅՍ ԾԱԳԻ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ». ՀԱՐՑԱԳՐՈՒՅՑ ՊՈԼՍԱՀԱՅ ԵՐԳԳՈՒՇԻ ՍԻՔԻԼԻ ՀԵՏ

«Թող դադարեն աշխարհի չորս կողմերում տեղի ունեցող պատերազմները, քանի որ դրանց պատճառով են երեխաները կորցնում ամենաթանկը».

Սիբիլ

«Թող դադարեն աշխարհի չորս կողմերում տեղի ունեցող պատերազմները, քանի որ դրանց պատճառով են երեխաները կորցնում ամենաթանկը».

— Հարգելի՛ Սիբիլ, պոլսահայ երգչուհին իր ոչ հայկական ազգանվամբ, թիբախ չի դառնում հայրենիքում, այն էլ էտպատերազմյան շրջանում, երբ շատերին թուրքական պիտակ են կայցնում:

— Արժե նշել, որ իմ երգարվեստի կյանքի մեջ միայն անունն էմ գործածում: Ներկայանում եմ առանց ազգանվան միայն Սիբիլ, — ասում եմ կատակով: Երաժշտական գործունեությանս առաջին տարիներին, երբ իբրև երգչուհի հայտնվեցի հայրենիքում, նրանք, ովքեր իմացել էին, ազգանունն Փեթթորոսոյլու, ասում էին Սիբիլ շան, փոխիք ր ազգանունը: Եթե ազգանուն փոխելն այդքան դյուրին լիներ, վայրկյան անգամ չէի սպասի... Այդ մասին շատ մտածեցի ի վերջո պետք չէ մարդկանց միայն իրենց անուն, ազգանունով չափել: Շատ «յան» ազգանվամբ հայեր կան, որ հայությանն և հայրենասիրության հետ կապ չունեն: Մասնավորապես էտպատերազմյան շրջանում գարմանքով ակա-նատես եղա այդ պմենին...

Գիտեք ինձ ինչ հուզեց պատերազմի օրերին սփյուռքից և Հայաստանից բազմաթիվ նամակներ ստացա. «Սիբիլ շան, ինչպե՞ս ես, մենք շատ ենք մտահոգ քեզ համար, ապահով ես, քեզ նեղացնողներ կա...»: Չեք կարող երևակայել, թե որքան հուզիչ էր այս տողերը կարդալ և մարդկանց մտահոգությունը զգալ անձիս հանդեպ: Պատերազմն հայրենիքում էր, իսկ Սիբիլը թուրքիայում: Ես չկարողացա այնտեղ մնալ, այդ դժվար օրերին հայրենիք եկա...

— Երբեմն մեր հանրությունը կարիք ունի պարզ բացատրություններ: Չեք արմատները և հատկապես ազգանունն ինչ պատմություն ունեն:

— Մայրական կողմից մեծ հայրս Սիվասի (Սեբաստիա) Դիվրիզ գավառից

է, իսկ մեծ մայրս՝ Թոկատի (Եվրոկիա) Էրբա գավառից: Նրանց ազգանունը Երեյեկյան էր, որը հետագայում դարձավ Երեյեկ: Հայրական կողմս էլ Ստամբուլից են՝ նախկինում Թորոսյան ազգանունով: 1934 թվականին Թուրքիայում ազգանվան մասին օրենք ընդունվեց, ըստ որի ինչպես մորս, այնպես էլ հորս կողմը պարտադրաբար փոխեցին իրենց ազգանունները: Հայրս ասում էր, որ այդ ժամանակաշրջանում վախ կար: Հատկապես տղա գավակ ունեցողները շատ էին վախենում, քանի որ «յան» ազգանունով կարող էին նեղություն տալ... Այդ շրջանում մարդիկ շատ վատ օրեր են ապրել, ապրել են վախով, նույնիսկ գիտեմ, որ շատ ընտանիքներ իրենց գավակներին թուրքական անուն էին տալիս, որպեսզի հետագայում խնդիր չլինի... Երբ փոքր էի, ինձ ասում էին՝ եթե փողոցում, անունդ հարցնեն ոչ թե Սիբիլ, այլ Սիբել կասես (Սիբելը թուրքիայում տարածված անուն է), մինչդեռ ես խստով մերժում էի: Հիշում եմ՝ մեկն ինձ Սիբել անունով վզնոց էր նվիրել... Մասնով էի, այժմ չեմ մտաբերում, թե քանի տարեկան էի, հավատացե՛ք երբեք ու երբեք չեմ գործածել... Մտերիմներս այս նյութի հանդեպ իմ զգայունությունը գիտեն և, երբ կատակով ինձ բարկացնել են ուզում Սիբել են կանչում...

— Հիմա նկատելի է պոլսահայերի հայրենիք վերադարձի միտումը, նույնիսկ պատերազմը նրանց որոշումները չիտխեց: Չեք շրջապատում հայրենիք վերադարձողներ կա և:

— Իմ շրջապատում ՀՀ քաղաքացիություն ունեցող կամ քաղաքացի դառնալ ցանկացողներ շատ կան, բայց Հայաստանում մնալուս հաստատվողներ դեռ չկան... Հայրենիքի կարոտով ապրող ու անպայման մի գեղեցիկ օր վերադառնալ փափագող ծանոթներ էլ ունեմ: Ուր էլ գնանք օտար ենք գգում, միայն հայրենիքում ենք տանը:

— Մինչ պատերազմը՝ համավարակի սկզբում քաղցկեղով հիվանդ երեխաների կողքին էիք ու օժանդակում էիք «Ժախտների քաղաքի» դրամահավաքին, պատերազմից հետո էլ տուժածների ընտանիքների կողքին էք: Դուք դեռ չեք բարձրաձայնում, սակայն բարեգործական հասերդ եք ծրագրել, կրպցե՞ք փակագծերը:

— Համավարակի, շրջանում արգենտինահայ ընկերոջս հեռուստահաղորդավար Լեո Մուլվյանի հետ առցանց մեծ համերգ կազմակերպեցինք, որին մասնակցեցին երգարվեստի հայտնի հայ դեմքեր աշխարհի չորս կողմերից: Բարեգործական համերգը հեռարձակվեց Հանրային հեռուստաընկերությամբ, և ողջ հասությոն ուղղվեց քաղցկեղով հիվանդ երեխաների բուժմանը: Վերջերս Հայաստանում կրկին մասնակցեցի բարեգործական համերգի՝ ներկայացնելով սփյուռքը: Ի հիշատակ զոհված զինվորների նոր ծրագրեր ունեմ, բայց մինչև իրականություն դառնալը, նախընտրում եմ չխոսել այդ մասին: Պարզապես մաղթում եմ, որ իրականություն դառնա, քանի որ միայն ինձանից չէ կախված (կազմակերպական և ֆինանսական հարցեր կան): Մրտանց փափագում և ծրագրում եմ, որ իմ երգարվեստի 10-ամյակը բարեգործական մենահամերգով նշեմ Հայաստանում:



— Հավատո՞ւմ եք, որ այս պատերազմից հետո Հայաստանում ապագա կա: Ինչի՞ն էք հավատում:

— Անկեղծ ասած դժվարանում եմ այս հարցին պատասխանել: Հիմա սիրտս շատ վիրավոր է: Մեծ ողբերգություն ապրեց համայն հայությունը: Երբ մտածում եմ զոհերի ու պատերազմի պատճառով հաշվանդան դարձած զինվորների և զերիների մասին (վստահ եմ յուրաքանչյուրը շատ մեծ հույսով է սպասում նրանց տունդարձին), նրանց մայրերի տանջանքի մասին, շատ մեծ ցավ եմ գգում: Խոսքեր չունեմ նկարագրելու այդ անդառնալի ցավը:

Պետք է ի սրտե աղոթեմք, որ յույս ծագի մեր երկրում: Հույսներս չկորցնենք, քանի որ մեզ ոտքի պահողը այդ հույսն է: Թող այդ հույսը երբեք չմարի մեր սրտերում, ապրի այնպե՛ս, ինչպես ապրելու է Ջիվանի դուրուկի աղոթքը...